

## ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ 33 ՆՈՐԱՅԱՅՏ ԱՆՈՒՆՆԵՐ

ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ

Տարիներ առաջ Հայկազեան Հայագիտական Հանդէսի Թ. Հատորին (1981) մէջ լոյս տեսած մեր մէկ յօդուածով<sup>1</sup>, ամփոփ տեղեկութիւններ փոխանցած էինք Հայրենի մատենագէտ Ամալիա Կիրակոսեանի կազմած Հայ պարբերական մամուլի մատենագիտութենէն<sup>2</sup> դուրս մնացած 34 Հայերէն նորայայտ թերթերու մասին<sup>3</sup>: Կիրակոսեանի Հատորը մինչ այդ կը համարուէր Հայ մամուլի համահաւաք վերջին ցուցակը: Այդ թուականէն ետք, հրապարակ իջան Հայ մամուլի մատենագիտութեան նուիրուած բազմաթիւ աշխատութիւններ, որոնք իրենց յայտնաբերած թերթերով աւելի եւս ամբողջացուցին մեր պատկերացումը Հայ մամուլի հարստութեան մասին: Այս բոլորին մէջ առաւել արժէքաւորը, Հայրենի մատենագէտ, հանգուցեալ Մանուէլ Բարլոյեանի կազմած Հայ պարբերական մամուլի մատենագիտական ցուցակն է, որ կը համարուի համահաւաք վերջին ցանկը, եւ որպէս այդպիսին՝ ամենահարուստն է իր տեսակին մէջ, ու հետեւաբար նուազ խոցելի՝ քան իր նախորդները<sup>4</sup>:

Պարզ է, որ Հայ մամուլի նուիրուած մատենագիտական իւրաքանչիւր ցուցակ հեռու պիտի ըլլայ ամբողջական ու անթերի ըլլալէ, այնքան ատեն, որ Հայահոծ գաղութները մեծ մասամբ տակաւին չունին իրենց մամուլի պատմութեան ու անոր մատենագիտութեան նուիրուած առանձին ուսումնասիրութիւններ եւ ցուցակներ: Հայաստանի ու սփիւռքի մատենադարաններն ու գրադարանները շատ հեռու են Հայկական հին ու նոր թերթերու ամբողջական հաւաքածոները պարփակելէ, երեւոյթ մը, որ կարելի չէ արդարացնել երբեք, մանաւանդ՝ երբ նկատի ունենանք Հայ պարբերական մամուլին կարեւորութիւնն ու դերը Հայ ժողովուրդի պատմութիւնն ու մշակոյթը բազմակողմանիօրէն ուսումնասիրելու տեսակէտէն: Հապա ինչպէ՞ս բացատրել այն պարագան, որ Հայկական թերթերէն շատերուն ո՛չ միայն ամբողջական հաւաքածոները չեն պահպանուիր այսօր Հայկական մեծ գրապահոցներէն գոնէ մէկն ու մէկուն մէջ, այլ անոնց մէկ կարեւոր մասէն միակ օրինակ մըն իսկ չէ փրկուած երբեմն, եւ շատ յաճախ, տարիներու կեանք ունեցող թերթի մը անո՛ւնը միայն ծանօթ է ուսումնասիրողներուն, այն ալ՝ ինչ-որ այլ թերթի մը «ստացանք»ներու բաժինին մէջ անոր մասին տրուած կցկտուր ծանօթութիւններուն շնորհիւ: Որքան որ հարուստ եղած է ու է՝ Հայ մամուլը, նոյնքան մեծ է գայն կո-

րուստէ փրկելու եւ պահելու մասնագէտներու անտարբերութիւնը, երեւոյթ մը՝ որ դժբախտաբար կը շարունակուի տակաւին քիչ մը ամէն կողմ:

Միաժամանակ, Հայ մամուլի ցուցակներէն ցարդ դուրս ձգուած են մօտ երկու տասնեակ Հայատառ թրքերէն տարեգիրքեր, տարեցոյցներ եւ նոյնանման այլ հրատարակութիւններ, որոնք իրենց բովանդակութեամբ նման են Հայերէն տարեցոյց-տարեգիրքերուն: Արդար է, որ անոնք եւս ներգրաւուին Հայ պարբերական մամուլի ցուցակներուն մէջ: Այդ Հայատառ թրքերէն հրատարակութիւնները ցարդ անուշադրութեան մատնուած են թերեւս անոր Համար, որ Հայ մամուլի մատենագէտները սովորաբար ծանօթ չեն եղած թրքերէնին, կամ գիտակցաբար անտեսած են անոնց գոյութիւնը:

Յասմիկ Ստեփանեան իր կազմած Հայատառ թրքերէն գիրքերու մատենագիտութեան մէջ այդ տարեցոյց-տարեգիրքերը յիշատակած է որպէս գիրքեր (թիւ 228, 251, 260, 271, 332, 347, 349, 422, 491, 528, 712, 720, 844, 862 եւ 906<sup>5</sup>) եւ զանոնք որպէս մամուլ նկատի չէ առած Հայատառ թրքերէն պարբերական մամուլի իր կազմած անջատ ցուցակին մէջ<sup>6</sup>: Չենք կրցած անձամբ ստուգել նշուած հրատարակութիւններէն շատերը, բայց անոնց անուններէն - *Մաշնամէ*<sup>7</sup>, *Նէվսալ*<sup>8</sup>, *Րուզնամէ*<sup>9</sup>, *Գազամիա* եւ *Մէվսիմնամէ*<sup>10</sup> - դատելով կը կարծենք, որ արդար է զանոնք որպէս պարբերական մամուլ ընդունիլը: Ամէն պարագայի՝ զանոնք ձեռքի տակ ունեցող մը միայն կրնայ ճշդել անոնց բովանդակութիւնը եւ հետեւաբար՝ նաեւ տեղը Հայ մատենագիտութեան մէջ:

Վերոնշեալներէն, այս յօդուածով տուած ենք միայն Հալէպի *Մաշնամէ*ին նկարագրութիւնը, որովհետեւ կրցած ենք ձեռքի տակ ունենալ անոր մէկ օրինակին լուսապատճէնը: *Մաշնամէ* անունով ծանօթ այս տարեգիրքերը, Օսմանեան կայսրութեան մէջ սկսան հրատարակ իջնել ժ.թ. դարու կէսերէն սկսեալ: Օսմաներէնով տպուած այս *սաշնամէ*ները լոյս կը տեսնէին ամէն տարի: Անոնք կը պարունակեն վիճակագրական բազմապիսի տուեալներ, պատմա-աշխարհագրական տեղեկութիւններ եւն.: 1847ին Պոլսոյ մէջ լոյս կը տեսնէ առաջին *սաշնամէ*ն, որուն, ընդհուպ մինչեւ 1929, կը յաջորդեն բազմաթիւ այլ *սաշնամէ*ներ: Առաջին *սաշնամէ*ները եղած են ընդհանուր, ու ընդգրկած են Օսմանեան կայսրութեան ամբողջ տարածքը: 1868էն ետք հրատարակ իջած են նաեւ նահանգային *սաշնամէ*ներ, ինչպէս նաեւ պաշտօնական զանազան մարմիններու եւ նախարարութիւններու յատուկ *սաշնամէ*ներ, իսկ աւելի ետք՝ նաեւ անհատական նախաձեռնութեամբ հրատարակուող *սաշնամէ*ներ<sup>11</sup>:

Սալնամէներուն մէջ հայ ազգարնակչութեան թիւը դիտաւորեալ կերպով ու քաղաքական նպատակներով մի՛շտ ալ նուազ ցոյց տրուած է: Հակառակ այս իրողութեան, անոնք չափազանց հարուստ նիւթ կը պարունակեն Արեւմտեան Հայաստանի, Կիլիկիոյ, Պոլսոյ, Պոլսամերձ շրջաններու եւ հայկական բազմաթիւ գաղութներու վարչական բաժանումներուն, տնտեսական, մշակութային, կրթական, կրօնական եւ այլ բնագաւառներու մասին: Հետաքրքրական են մանաւանդ Օսմանեան Կայսրութեան քաղաքներուն ու գիւղաքաղաքներուն մէջ գործած հայ պաշտօնեաներուն ու պետական գանազան մարմիններու անդամակցած հայերուն անուանացանկերը:

\* \* \*

Ներկայ յօդուածով կը ներկայացուին Բաբլոյեանի վերոնշեալ գիրքէն դուրս մնացած հայերէն եւ հայ խմբագիրներու հրատարակած օտարալեզու 33 թերթեր<sup>12</sup>, յուսալով որ այս աշխատանքը մասամբ կը նպաստէ հայ մամուլի աւելի ամբողջական ու կատարեալ ցուցակ մը ունենալու գործին, որուն պատրաստութեան օր մը կրկին պիտի ձեռնարկուի անպայման:

Տասնամեակներու վրայ երկարող պրպտումներու շնորհիւ, մատենագէտներ կրցած են լոյսին բերել հայերէն անծանօթ բազմաթիւ թերթեր, բայց կարծէք այդ աշխատանքը այլեւս կամացկամաց կը մօտենայ իր լրումին, եւ նոր թերթերու յայտնաբերումը հետզհետէ կը դժուարանայ: Որքան ալ համեստ ըլլան, սակայն, ապագային իրագործուելիք նոյնանման փորձերուն արդիւնքները, կատարուած իւրաքանչիւր յայտնաբերում, ինքնին կը համալրէ հայ մամուլի մատենագիտութիւնը, նպաստելով անոր ամբողջական, ու հնարաւորին չափ կատարեալ, ցուցակի մը ստեղծումին:

Բաբլոյեանի մօտ շատ թերի ներկայացուած են արաբերէն եւ օսմաներէն (արաբատառ թրքերէն) թերթերը: Հայ բանասիրութեան ու մատենագիտութեան ծանօթ են արաբերէնով եւ օսմաներէնով լոյս տեսած բազմաթիւ հայկական թերթեր, որոնք զարմանալիօրէն դուրս մնացած են Բաբլոյեանի տեսադաշտէն: Արաբերէն թերթերէն յիշատակուած են միայն երեքը, իսկ օսմաներէններէն՝ միայն մէկը: Այս յօդուածով զանց ըրած ենք այդ երկու լեզուներով լոյս տեսած, եւ հայ խմբագիրներու կամ կազմակերպութիւններու հրատարակած թերթերը, պարզապէս անոր համար, որ մեզի ծանօթ այդպիսի թերթերուն թիւը կը հասնի տասնեակներու, ուստի կը մտածենք զանոնք յետագային ներկայացնել անանձին յօդուածով մը:

Բարլոյեանի ցուցակէն յաճախ դուրս մնացած են նաեւ Հայերէն այնպիսի թերթեր, որոնք կանխող ցուցակներու մէջ յիշատակուած են, եւ երբեմն նոյնիսկ մէկէ աւելի անգամներ այդ աշխատութիւնները ծանօթ եղած են Բարլոյեանի ու տեղ գտած՝ իր օգտագործած աղբիւրներու շարքին: Այս յօդուածով չենք տար այդ թերթերուն ցանկը: Այնուամենայնիւ, անոնք այնքան ալ արհամարհելի թիւ մը չեն ներկայացներ: Իր գիրքին ներածութեան մէջ, Բարլոյեան կը յայտնէ, թէ ինք գիտակցաբար դուրս ձգած է ձեռագիր, չբազմացուած թերթերը<sup>13</sup>, բայց մեր ակնարկութիւնը չի վերաբերիր անշուշտ այդպիսիներուն: Հասկնալի պատճառներով այս յօդուածին մէջ չենք ներգրաւած նաեւ Հայկազեան Հայագիտական Հանդէսի վերոյիշեալ մեր յօդուածին մէջ յիշատակուած, բայց Բարլոյեանի ցուցակէն դուրս մնացած բազմաթիւ թերթեր<sup>14</sup>:

### ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐԱՅԱՅՏ ԹԵՐԹԵՐ

«ԱԶԱՏ»: Հանդէս Ամսօրեայի յօդուածագիրը, որ, ըստ Հ. Օգոստինոս Վ. Սեքուլեանի կազմած մատենագիտական ցուցակին, Համայնակ Համբարեանն է<sup>15</sup>, 1908ին լոյս տեսած Հայերէն թերթերու ցուցակը ներկայացնելէ ետք, կ'աւելցնէ, թէ հոն իր յիշած թերթերէն զատ, նոյն թուականին լոյս տեսած են հինգ այլ թերթեր, որոնց մասին տեղեկութիւն չունենալուն պատճառով, կը թուէ միայն անունները՝ առանց յաւելեալ մանրամասնութեանց: Յիշեալ հինգ թերթերէն մէկն է Ազատը<sup>16</sup>:

Հանդէս Ամսօրեայի այս յօդուածէն ետք, Թիֆլիսէն ընթերցող մը՝ Հայկ Եղիշէ Տէր-Աստուածատրեան, նամակով մը կ'իմացնէ յօդուածագիրին, թէ իր յիշատակած այդ հինգ թերթերէն երեքը լոյս չեն տեսած, իսկ միւս երկուքին առիթով կ'ընէ երկու դիտողութիւն: Իր ըրած դիտողութիւններէն մէկը՝ թէ հոն յիշուած Մոծակը լոյս տեսած ըլլայ 1907ին եւ ո՛չ 1908ին, չի համապատասխաներ իրականութեան: Ըստ Տէր-Աստուածատրեանի, Ազատ, Բանուորի Չայն եւ Պիժակ թերթերը լոյս չեն տեսած<sup>17</sup>, բայց փաստը այն է, որ Բանուորի Չայնը ու Պիժակը 1908ին իսկապէս լոյս տեսած են եւ Բարլոյեանի մօտ յաջորդաբար կը կրեն 389 եւ 405 համարները<sup>18</sup>: Հետեւաբար՝ թերեւս կարիք չի մնար կասկածի տակ առնելու նաեւ Ազատի հրատարակութեան փաստը, որովհետեւ նամակագիրին միւս առարկութիւնները, ինչպէս տեսանք, չեն համապատասխաներ իրականութեան:

«ԱՍԻԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ»: Ամսաթերթ: Առաջին թիւը լոյս տեսած է 1852ին, Պոլիս: Հրատարակած է

Փրանսերէն, թրքերէն, հայերէն եւ յունարէն յօդուածներ: Խմբագիրը եղած է Փրանսացի մը՝ Հ. Քայետ: Ամսաթերթին նպատակը եղած է Արեւելքի եւ Ասիոյ ժողովուրդներուն վերաբերեալ պատմական, հնագիտական, աշխարհագրական եւ արուեստագիտական նիւթեր հրատարակել: Կը յիշուի, որ հայերէն բաժինի «աշխատասիրող»ն է Պոլսոյ *Բանասէր* թերթի խմբագիրը՝ Յովհաննէս Հիսարեան, որուն *Բանասէրի* 1851ի թիւերէն մէկուն մէջ լոյս ընծայուած առաջնորդող յօդուածը արտատպուած է *Ասիական Օրագիր* *Կոստանդնուպոլսոյ*ի առաջին համարին մէջ<sup>19</sup>:

Ներսէս Գասապեանի կազմած Հայ մամուլի մատենագիտական ցուցակը կ'ընդգրկէ Պոլսոյ մէջ լոյս տեսած *Journal Asiatique de Constantinople*, եւ որպէս վերջինիս խմբագիր ցոյց կու տայ նոյն Յովհաննէս Հիսարեանը: Անշուշտ հոս խօսքը կը վերաբերի վերոնշեալ *Ասիական Օրագիր* *Կոստանդնուպոլսոյ*ին: Գասապեանի անձանօթ եղած է սակայն այն պարագան, որ թերթը հրատարակուած է չորս լեզուներով, ընդ որում՝ նաեւ հայերէնով, մինչ ինք զայն դասած է հայկական բովանդակութեամբ օտարալեզու թերթերու շարքին<sup>20</sup>: *Journal Asiatique de Constantinople* թերթին Փրանսերէն յօդուածներով աշխատակցած է Գրիգոր Աղաթոն<sup>21</sup>:

«ԱՄՊԱՐԷՉ»: Ամսագիր: Խմբագիր՝ Հրաչեայ Աճառեան, երբ կ'աշակերտէր Պոլսոյ կեդրոնական Վարժարանին: Աճառեան կեդրոնական յաճախած է չորս տարի՝ 1889-93ին, այնպէս որ *Ասպարէզ*ն ալ «հրատարակուած» պէտք է ըլլայ այդ թուականներուն: Յայտնի չէ թէ քանի թիւ լոյս տեսած է, բայց Աճառեան կը յայտնէ, թէ երբ ինք կը ներկայանայ Գաբրիէլ Նորատունկեանին, անոր ցոյց տալու համար իր գրութիւնները, այլ գործերու շարքին հետը կը տանի նաեւ *Ասպարէզ*էն «երկու-երեք» համար<sup>22</sup>: Շատ հաւանաբար՝ ձեռագիր: Աճառեան իր յուշերուն մէջ *Ասպարէզ*ի մասին կը գրէ. «Ամէն սկսնակ պատանու նման ես էլ սկսեցի «հրատարակել» մի պարբերական հանդէս «Ասպարէզ» անունով, ուր գրում էի ոտանաւորներ եւ ստուգաբանական յօդուածներ. օրինակ՝ թէ աղ եւ հող նոյնարմատ են, ինչպէս Փրանսերէն sel եւ sol կամ պարսկերէն nemek եւ semek: Յիշելու արժանի է նաեւ կապիկներու աստուածաշունչը... եւ նման երեխայական բաներ»<sup>23</sup>:

«ԱՍՏՂ»: Յունաստան: Հայ որբերու (արդեօ՞ք «Որբերու Ընդհանուր Միութեան») հրատարակութիւն: 1920ականներ: Խմբատիպ<sup>24</sup>:

**«ԱՍՏՂԻԿ ՔԻՐԱՄՆՈՑ»:** Ձեռագիր շարաթաթերթ: Կիրասոն: Հրատարակութիւն «Սանուց Ընկերութեան» (հիմնուած 1871ին)<sup>25</sup>: Երբ ընկերութիւնը կը յաջողի իր անդամներու շարաթաթավճարներով եւ այս թերթին վաճառքէն որոշ գումար մը ապահովել, 1874ին Պոլսոյ մէջ տպագրութեամբ կը հրատարակէ ձեռագիր թերթին մէջ նախապէս տեղ գտած գրութիւնները՝ *Աստղիկ Քիրասոնոյ*, *Երկասիրութիւնք Աշակերտաց Լ. [ուսաւորչեան]* վարժարանի *Քիրասոնոյ* խորագիրով<sup>26</sup>:

*Աստղիկ Քիրասոնոյ* ձեռագիր թերթը լոյս տեսած պէտք է ըլլայ ընկերութեան հիմնադրութենէն տպագիր *Աստղիկ Քիրասոնոյ* լոյս ընծայման թուականներուն միջեւ ինկած ժամանակամիջոցին՝ 1871էն 1873 կամ 1874: Երբ կը յիշուի որ ձեռագիր թերթին վաճառքը որոշ եկամուտ ապահոված է ընկերութեան, ուրեմն կարելի է ենթադրել, որ *Աստղիկ Քիրասոնոյ* թէեւ ձեռագիր, բայց կ'ընդօրինակուէր բազմաթիւ օրինակներով եւ այդպէս կը տարածուէր ընթերցող շրջանակներու մէջ:

**«ԱՐԱՔՍ»:** Ձեռագիր շարաթաթերթ: Հրատարակութիւն Մարգուանի Անաթօլիա Գոլէճի հայ ուսանողութեան «Շաւարշան» միութեան մէկ բաժինը համարուող «Գրական Միութեան»: 1888ին հիմնուած «Գրական Միութիւն»ը 1901ին ժամանակաւորապէս կը դադրի գործելէ եւ օսմանեան սահմանադրութեան վերահաստատումէն յետոյ միայն, աւելի ճիշդ՝ 1908ի Սեպտեմբերին, կը վերակազմաւորուի ու իր մէջ ծնունդ կու տայ երկու այլ միութիւններու՝ «Մարգասիրաց Միութեան» եւ «Երաժշտասիրաց Միութեան», որոնք «Գրական Միութեան» հետ միասնաբար կը յորջորջուին «Շաւարշան Միութիւն» անունով<sup>27</sup>: *Արաքսի* մէջ տեղ կը գտնեն գիտական, պատմական եւ վիպական ընտիր կտորներ, «որոնք եթէ հրատարակութեան տրուէին՝ պատիւ պիտի բերէին Անաթօլիայի հայ ուսանողութեան», ինչպէս կը հաստատէ ժամանակակից վկայութիւն մը<sup>28</sup>: 1910ին *Արաքսը* լոյս կը տեսնէ տպագիր, բայց նոր անուանումով՝ *Նոր Այգ*:

Վերել տրուած թուականներէն կարելի է հետեւցնել, որ *Արաքսը* լոյս տեսած է 1908ի Սեպտեմբերէն 1909ի Դեկտեմբեր ամիսներուն միջեւ ինկած ժամանակամիջոցին:

**«ԳՐԱՍԷՐ»:** Լոյս տեսած է Հայէպ, 1935-36ին: Հրատարակիչ խմբագիր՝ էլի Նազարեան: 4 էջ, 6 թիւ, տպարան «էլ Դաքատտոմ»: Եղած է տեղեկատու թերթ եւ հրատարակած է հայերէնով ու ֆրանսերէնով տպուած հայագիտական գիրքերու մասին ծանօ-

Թուֆիւններ (ըստ խմբագիրին հաղորդած բանաւոր տեղեկութեանց)<sup>29</sup> :

«ԴԱՐԱԿ» : Խմորատիպ թերթ, լոյս տեսած՝ Մոլտրն, Մէսսօլէ-չուսէց] (Միացեալ Նահանգներ), 1898ին : Այս թերթէն «Պատասխան» խորագիրով բանաստեղծութիւն մը արտատպած է Մանուկ Գ. Ճիզմէճեան<sup>30</sup> :

«ԵՐԳ ՈՒ ՆԵՐԿ» : Աշակերտական ձեռագիր տարեգիրք : Հրատարակութիւն Թիֆլիսի Ներսէսեան Վարժարանի աշակերտութեան : Արտաշէս Վրոյր իր յուշերուն մէջ կը պատմէ, թէ ապագայ հայ մեծ ճարտարագետ Միքայէլ Մազմանեան (1899-1971) 1914ին Թիֆլիսի Ներսէսեան Վարժարանի խումբ մը ուսանողներու ընկերակցութեամբ կ'այցելէ Անի եւ այդ երկօրեայ այցելութենէն այնքան կը տպաւորուի, որ Անիի մասին փոքրիկ յօդուած մը կը գրէ աշակերտական *Երգ Ու Ներկ* տարեգիրքի 1916ի թիւին մէջ, «Անիի Մայր Եկեղեցին» խորագիրով, հոն գետեղելով նաեւ Անիի մէջ իր իսկ գծած նոյն եկեղեցւոյ ջրաներկ նկարը<sup>31</sup> : Տարեգիրքի յաջորդ՝ 1917ի թիւով Մազմանեան լոյս կ'ընծայէ այլ յօդուած մը՝ «Հայ Որմնանկարչութիւնը» խորագիրով, որուն այս անգամ կցուած էր Անիի Տիգրան Հոնենցի եկեղեցւոյ որմնանկարներէն «Տրդատ Թագաւորի Եքերթը» իր կողմէ կատարուած նմանահանութիւնը<sup>32</sup> : Արտաշէս Վրոյր իր գիրքին մէջ տուած է յիշեալ երկու յօդուածներէն մէկական էջի նմանահանութիւնը<sup>33</sup> :

«ԹՈՒԹԱԿ» : Ձեռագիր թերթ : Պարտիզակ : Խմբագիր՝ Յովհաննէս Մկրեան (ապա՝ քահանայ, 1831-1909) : Թէեւ չէ յիշուած Թուֆակի լոյս ընծայման թուականը, բայց սխալ չ'ըլլար թերեւս ենթադրել որ ան լոյս տեսած է 1840ականներու վերջերուն կամ 1850ականներու սկիզբներուն, Մկրեանի լոյս ընծայած *Բամբեր Պարտիզակեանի* հրատարակումէն (1847)<sup>34</sup> քիչ առաջ կամ վերջ :

«ԼԱԼԿԱՆ ՄԻՆԱՍ» : Հալէպի *Դէպի Երկիր* հանդէսը իր Դ-Ե-միացեալ պրակով (1946) արտատպած է գրութիւն մը Նուպար [Փարթամեան]էն՝ վերցուած անոր *Հալկան Մինաս* թերթէն<sup>35</sup> : Նշեալ գրութեան կցուած է խմբագրական ծանօթութիւն մը, որմէ կ'իմանանք թէ *Հալկան Մինասը* միայն մէկ օրինակով լոյս տեսնող ձեռագիր ամսաթերթ մըն է (անշուշտ Հալէպի մէջ), որուն տէրը, տնօրէնը, խմբագիրը, պատասխանատուն, սրբագրողն ու նկարիչը եղած է նոյն Նուպարը [Փարթամեան] : Մինչեւ այդ թուականը

Հալկան Մինասէն լոյս տեսած էր ընդամէնը երեք թիւ, որոնցմէ վերջինը նուիրուած էր Նոյեմբեր 20ին՝ Հայաստանի մէջ խորհրդային կարգերու հաստատման տարեդարձին<sup>36</sup>։

«ԼՈՒՍԱՍՓԻՒՌ»։ Կարին, 1900ականներու սկիզբ։ Հ. Եփրեմ վ. Պողոսեան յիշելով այս թերթը, կը մէջբերէ անոր մասին Մկրտիչ Պարսամեանի Պոլսոյ Արեւելքին մէջ տպած մէկ վկայութիւնը, ըստ որուն ան լոյս տեսած է «1900-էն տարիներ առաջ, կարճատեւ գոյութեամբ»<sup>37</sup>։ Գարեգին Լեւոնեան, առանց թուական ճշդելու, իր գիրքի վերջաւորութեան տեղ գտած հայերէն թերթերու այբբենական ցանկին մէջ կը յիշէ Կարին տպուած Գարուն Համասփիւռ անունով թերթ մը<sup>38</sup>, որուն համար ան նախապէս որպէս հրատարակութեան վայր սխալմամբ նշած էր Գահիրէն<sup>39</sup>։ Արդեօ՞ք նոյն թերթին մասին են եղած երկու անջատ ակնարկութիւնները, թէ՞ խօսքը կը վերաբերի իրարմէ տարբեր երկու թերթերու։ Դժուար է յստակ պատասխան տալ։ Նշենք նաեւ, թէ Ամալիա Կիրակոսեան եւս, Հ. Ռաֆայէլ Կարապետեան-Քէօսեանէն առնելով իր տեղեկութիւնները, ինք եւս կը յիշատակէ տպագրութեան վայրն ու թուականը անյայտ Հուսասփիւռ անունով թերթ մը<sup>40</sup>։

«ԼՈՒՄՆԱԿ»։ Դպրոցական ամսաթերթ։ Պոլիս։ 1908 կամ մէկ-երկու տարի առաջ։ Խմբագիր՝ Տիգրան (ապա՝ Արտաւազդ Արք.) Սիւրմէեան։ Սիւրմէեան այս թերթը լոյս ընծայած է Պէրպէրեան Վարժարանին աշակերտած տարիներուն։ Ինք յիշեալ վարժարանը յաճախած է Դ. կարգէն սկսեալ ու անկէ շրջանաւարտ եղած է 1908ին։ Հետեւաբար՝ ենթադրելի է, որ Հուսնակն ալ լոյս տեսած ըլլայ այդ թուականին կամ անկէ առաւելագոյնը 1-2 տարի առաջ։ Հաւանական է որ Հուսնակը ձեռագիր եղած ըլլայ, ինչպէս էր պարագան այդ օրերու մեր դպրոցական գրեթէ բոլոր թերթերուն<sup>41</sup>։

«ԿՈԿՈՆ»։ Հալէպ, 1924։ Հալէպահայ ականաւոր ակնաբոյժ եւ հասարակական գործիչ Ռոպերտ Ծեպեճեան (1909-2001), իր յուշերուն մէջ խօսելով դպրոցական իր օրերէն, կը յայտնէ թէ Հալէպի հայ բողոքական համայնքի Ղազանճի-Պազար թաղամասի վարժարանի Ե. կարգի աշակերտները 1924ին ձեռնարկած են Կոկոն անունով խմորատիպ թերթի մը հրատարակութեան, որուն խմբագրութիւնը ստանձնած է Յակոբ Զաղլասեան (յետոյ՝ բժիշկ, ԱՄՆ), իսկ տպագրական գործերը կատարած է ինք<sup>42</sup>։ Կոկոնէն լոյս տեսած է քանի մը թիւ։ Օրինակներ չեն պահպանուած։

**«ԿՈՒԼ-ՏՈՒՐ»:** Երգիծական-երիտասարդական հանդես: «Պաշտօնաթերթ Խորվիրապ Անդրչիրիմեան Ռատեոկայանի»: Հրատարակիչ եւ խմբագիր՝ էլի Նազարեան: Լոյս տեսած է 1934ին, Հալէպ, տպարան «էլ Դաքատտոմ», 6 թիւ, 8 էջ, մօտաւորապէս 20x30 սմ.: Օրինակներ չեն պահպանուած (ըստ խմբագիրին հաղորդած բանաւոր տեղեկութեանց)<sup>43</sup>:

**«ՀԱՅԵԼԻ»:** Յիշատակուած է Հալէպի Սուրիական Մամուլին մէջ՝ այսպէս. «Ստացանք Հայելի երգիծական խմորատիպ պարբերականը, որ կը խմբագրուի Իսկէնտէրուն»<sup>44</sup>: Թերեւս ճիշդ ըլլայ ենթադրել որ լոյս տեսնել սկսած է 1923ի վերջերուն կամ 1924ի առաջին օրերուն:

**«ՀԱՆԴԷՍ-ԳՐԱԿԱՆ»:** Պարտիզակ: Հրատարակութիւն տեղւոյն «Ուսանողական Միութեան», որ ենթադրաբար գործած է 1910-14ի միջեւ: Հետեւաբար՝ թերթն ալ լոյս տեսած պէտք է ըլլայ այդ թուականներուն: Խմբագիր՝ Տ. Թովմա Աւագ Քէնյ. Շիկահեր, երբ տակաւին ուսանող էր: Ետտ հաւանաբար եղած է խմորատիպ<sup>45</sup>:

**«ԶԱՅՆ»:** Աշակերտական խմորատիպ ամսաթերթ: Լոյս տեսած է 1906ին, Բագու: Ունեցած է անկանոն հրատարակութիւն<sup>46</sup>:

**«ՂԱՐԱԲԱՂԻ ԼՐԱԲԵՐ»:** Ետտ փոքր ծաւալի օրաթերթ: Լոյս տեսած է Եռլի, հաւանաբար 1920ի սկզբնաւորութեան, եւ Ղարաբաղի նոյն տարուան Մարտի դէպքերէն ետք վերանուանուած է Ազատ Ղարաբաղ: Լոյս ընծայման նպատակը եղած է «ժողովրդին տեղեակ պահելու կացութեան եւ պայքարելու շրջուող եւ ելեքտրականացնող պրովոկասիոն լուրերի ազդեցութեան դէմ»: Ըստ երեւոյթին ունեցած է դաշնակցական թեքում<sup>47</sup>:

**«ՄԻՈՒԹԻՒՆ»:** Աշակերտական թերթ Պոլսոյ Ռոպէրթ Գոլէճի հայ ուսանողութեան: Խմբագիր՝ Ճանիկ Հայկ Չազրը: Լոյս տեսած պէտք է ըլլայ խմբագիրին Գոլէճին մէջ ուսումնառութեան տարիներուն՝ 1895-1900 Յունիս 15ի միջեւ<sup>48</sup>: Հաւանաբար այս այն թերթն է զոր յիշած է Պօղոսեան, որպէս Պոլսոյ Ամերիկեան Ռոպէրթ Գոլէճի «Հայ Սանուց Միութեան» հրատարակութիւնը, որուն համար կ'ենթադրէ, թէ եղած է խմորատիպ<sup>49</sup>:

**«ՄՏՐԱԿ»:** «շարաթօրեայ օրկան գաւեշտասէրներուն»: Բաժնեգիրը եղած է 3 տոլար: Հասցէն էր. Mudrag Publ. Co. 994 Wa-

shington Street, Boston 18, Mass[achusetts]<sup>50</sup>: Միայն այսքանով յիշուած է Բազմապէսի մէջ: Յաւելեալ մանրամասնութիւններ կը պակսին:

«ՄՕՏԱ»: Պոլիս: Յարդ Հայ մամուլի մատենագիտութեան ծանօթ է Կարապետ Փանոսեանի խմբագրած Մօտա անունով մէկ թերթ միայն, զոր Լեւոնեան կը յիշէ որպէս «նորաձեւութեանց թերթ», լոյս տեսած 1874-75ին, Պոլիս<sup>51</sup>: Այս տեղեկութիւնները Լեւոնեանէն վերցնելով կրկնած է նաեւ Կիրակոսեան<sup>52</sup>: Բարլոյեան կը յայտնէ թէ Մօտան լոյս տեսած է 1875-76ին եւ եղած «նորաձեւութեան շաբաթաթերթ», ապա՝ օրաթերթ: Ան կ'աւելցնէ, թէ թերթը լոյս տեսած է Հայերէնով ու Հայատառ թրքերէնով<sup>53</sup>: Մինչդեռ Թէոդիկ՝ խօսելով Փանոսեանի հրատարակած թերթերուն մասին, յստակօրէն կ'ըսէ, թէ ան հրատարակած է նոյնանուն երկու անջատ թերթեր. «հրատարակած է նորաձեւութեան Հանդէս մը «Մօտա» (1874) եւ Հայերէն շաբաթաթերթ մը Համանուն (1875) զոր 1876 Յնվր. 1ին օրաթերթի վերածած է եւ շարունակած մինչեւ Սեպտ. 4»<sup>54</sup>:


Տրուած տեղեկութիւններէն յստակ կը դառնայ ուրեմն, որ Փանոսեան հրատարակած է նոյնանուն երկու թերթ, մին՝ նորաձեւութեան Հանդէս 1874ին, եւ երկրորդը՝ շաբաթաթերթ, 1875ին, զոր 1876 Յունուար 1ին վերածած է օրաթերթի ու շարունակած մինչեւ նոյն թուականի Սեպտեմբեր 4:

«ՆՈՐ ԾԱՆԱՊԱՐՀ»: Ալեքսանտրէթ, խմբագիր՝ Սեդրակ Ապաճեան: Եղած է ընդլատակեայ խմորատիպ թերթ՝ յառաջդիմական ուղղութեամբ: Լոյս տեսած է 1925ին<sup>55</sup>:

«ՊԱՏԱՆԻ»: Ազգային Հասարակական գրական գեղարուեստական ամսաթերթ: Մեքենագիր-բազմացուած: Այս թերթէն մեր տրամադրութեան տակ ունինք միայն առաջին թիւէն (Մարտ 1934) օրինակ մը, որ կը բաղկանայ 12 էջէ, 21,3 x 28 սմ.: Թիւը կը բացուի մէկ էջանի խմբագրականով մը («Կոչ»), ուր կոչ կ'ուղղուի պատանի ընթերցողներուն միանալ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Պատանեկան Միութեան շարքերուն: Կը մէջբերենք Հատուած մը. «Հայ Պատանի, ահա այս կոչը ուղղում ենք քեզ որպէսզի սթափուես եւ միանալով մեր շարքերին, Հ. Յ. Դաշնակցութեան սուրբ դրօշի ներքոյ Համախումբելով պաշտպանենք Հայ ժողովրդին, իրեն սպառնացող բազմաթիւ վտանգներէր, որովհետեւ նրա միակ յոյսն ու ապաւէնը դուք էք, գիտակից պատանիներդ»:

Լեզուն արեւելահայերէն է, ու արդէն զայն ինծի տրամադրողն ալ հաւաստիացուցած էր թէ զայն բերած է Իրանէն: Ուրեմն պիտի ենթադրել որ Պատանին հաւանաբար տպուած է Իրան, թերեւ՝ Թեհրան:

Այս առաջին թիւին մէջ կայ Ա. Ազիզեան ստորագրութեամբ յօդուած մը՝ «Հրայր Դժոխք» վերնագիրով (կենսագրական եւ նկար), արտատպում մը Յովհաննէս Շիրազէն՝ «Անմահ Հայրենիք», Սեդա ստորագրութեամբ պատմուածք մը՝ «Անվեհեր Պատանին» եւ Մ. Փիրումեան ստորագրութեամբ յօդուած մը՝ «Հայ Դատի Թշնամիները» խորագիրով (1918-1923 թուականներու դէպքերուն մասին):



«ՊԱՏԱՆԻ», թիւ 1



«ՍԱԼՆԱՄԷ», Հալիպ, 1868-69

«ՍԱԼՆԱՄԷ», [հիմնի] 1285 թուականի [24 Ապրիլ 1868 - 12 Ապրիլ 1869], Հալիպ, Հալիպ նահանգի Տպարան («Վիլայէթ Մաթպասի»), 14 x 19,6 սմ., 68 էջ: Կը բացուի «Մուգատտիմէ» («Յառաջաբան») վերնագրուած մուտքով մը, ստորագրուած՝ «Իրան թէրճիմանի» [Իրանի [հիւպատոսարանի] թարգման]՝ Նիկողոս Տէր Մարգարեանի կողմէ՝, որ անշուշտ եղած պիտի ըլլայ հայատառ այս հրատարակութեան պատասխանատուն: Հոն կը տեղեկացուի թէ, Հալիպ նահանգի «Մաքթուպճի» Հալիթ Պէյի կազմած Մալնամէին հերթական երկրորդ հատորին հայատառ հրատարակութիւնն է յիշեալը:

Հալէպը Պոսնիայէն ետք եղած է առաջին նահանգը, որ 1867ին ունեցած է իրեն յատուկ Մալնամէն: Նոյն թուականին Հալէպի մէջ կը սկսի հրատարակուիլ առաջին թերթը՝ *Յռաթը*՝ օսմաներէնով եւ արաբերէնով: Կարճ ժամանակ ետք վերջինիս կը միանայ նաեւ հայատառ թրքերէն բաժին մը, որ իր գոյութիւնը կը պահէ 6-10 ամիս միայն, եւ որմէ լոյս կը տեսնէ ընդամէնը 51 թիւ (թիւ 50-101): Ահա ա՛յս շրջագիծին մէջ է ուրեմն, որ Հալէպի յատուկ օսմաներէն Մալնամէին կու գայ միանալ նաեւ հայատառ թրքերէն Մալնամէն, որուն մէկ օրինակը կը պահուի Երեւանի Եղիշէ Չարենցի Անուան Գրականութեան Եւ Արուեստի Թանգարանին մէջ, որուն պատճէնին վրայ հիմնուելով տուինք անոր նկարագրութիւնը:

«ՓՈՐՉԱՆՔ»: Յակոբ Ծ. Սիրունի, խօսելով Վանի հայերէն թերթերուն մասին, կ'ըսէ, թէ 1908ին օսմանեան սահմանադրութեան վերահաստատումէն ետք Վանի մէջ լոյս տեսան խմորատիպ քանի մը թերթեր, որոնց կարգին կը յիշատակէ նաեւ *Փորձանքը*՝ առանց սակայն յաւելեալ մանրամասնութիւններ հաղորդելու անոր մասին<sup>57</sup>: Արդեօ՞ք նոր եւ այլոց կողմէ ցարդ չյիշատակուած թերթ մըն է ան, որ անուէն դատելով ենթադրաբար կրնայ երգիծաթերթ մը եղած ըլլալ, թէ՞ Սիրունի շփոթած է զայն նոյն օրերուն՝ 1909-10ին, նոյն քաղաքին մէջ լոյս տեսած խմորատիպ *Յորձանքին* հետ<sup>58</sup>:

«ՓՈՒՆՉ»: Գրական-աշակերտական թերթ: Լոյս տեսած է միայն մէկ թիւ, 1884ին: Խմբագրուած է Այնթապ, Վահան Քիւրքճեանի կողմէ ու տպուած՝ Պոլիս<sup>59</sup>:

«ՔՆԱՐ»: Աշակերտական թերթ Պոլսոյ Ռոպէրթ Գոլէճի հայ ուսանողութեան: Խմբագիր՝ Ծանիկ Հայկ Չազըր: Լոյս տեսած պէտք է ըլլայ խմբագիրին Գոլէճին մէջ ուսումնառութեան տարիներուն՝ 1895-1900 Յունիս 15ի միջեւ<sup>60</sup>:

#### ՕՏԱՐ ԼԵՉՈՒՆԵՐՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՐԹԵՐ

«NOUS VOICI»: Պարբերաթերթ: Հրատարակութիւն Հալէպի Յրանսական Լիսէի բարձրագոյն դասարաններուն: Հրատարակիչ-խմբագիր՝ էլի Նազարեան: Լոյս տեսած է 1930ականներուն, ընդամէնը 4 թիւ, 8 էջ, մօտաւորապէս 20x30 սմ., տպարան «էլ Դաքատտոմ» (ըստ խմբագիրին հաղորդած բանաւոր տեղեկութեանց)<sup>61</sup>:

«NOUVELLES DE L'ARMÉNIE»: Ժրնել: Եռամսեայ պաշտօնաթերթ Զուլցբերիական Հայասէր Ընկերակցութիւններու Միութեան («Organe trimestriel de la Fédération des Comités Suisses Amis des Arméniens, Genève»)<sup>62</sup>:

«O DOMINANTE»: Ման-Բաուլօ, 1934, փորթուկալերէն: Խրմբագիր՝ Անդրանիկ Պուտագեան: Այս թերթին մասին մեր տեղեկութիւնները կը պարտինք Ման-Բաուլոյէն Ե. Յ. Մխիթարեանի «Բաց նամակ ընկ. Անդրանիկ Պուտագեանի» խորագիրով կարճ գրութեան, ուր յօդուածագիրը բարձր կը գնահատէ Պուտագեանի այս թերթը, որուն էջերէն Հայ ընթերցողը կը ծանօթանար Պրագիլի գրականութեան, իսկ պրագիլցին՝ Հայ գրականութեան ու Հայոց պատմութեան<sup>63</sup>: Արդե՞օք պիտի ենթադրել որ ան ունեցած է նաեւ Հայերէն էջեր կամ Հայերէն բաժին, թէ՞ լոյս տեսած է միայն փորթուկալերէն: Տրուած տեղեկութիւններէն կը հասկցուի որ թերթէն մինչ այդ լոյս տեսած էր երկրորդ տարուան 1-4 միացեալ համարը: Յօդուածին ընթերցումէն կը ստացուի այն տպաւորութիւնը, որ թերթին խմբագիրը եղած է հնչակեան մը:

«SEVAN»: Մանչեսթրըր (Անգլիա): Անգլերէնով բազմագրուած ամսաթերթ, լոյս տեսած 1953ին: Կը յիշուի որ Sevanը խմբագրած են «խումբ մը անգլիախօս Հայ երիտասարդներ» իրենց հոգեւոր հովիւին՝ Աշոտ Քհնյ. Տէր Յարութիւնեանի հետ: Պօղոս Զենագեան Sevanի մէջ քանի մը «Համալից յօդուածներ» ամփոփած է Մանչեսթրրի Հայ գաղութի պատմութեան մասին<sup>64</sup>:

«WOZU UNSERE MISSION»: Որպէս խմբագիր կը յիշուի Արմենակ Ս. Պարոնիկեան<sup>65</sup>: Այլ մանրամասնութիւններ կը պակսին:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

<sup>1</sup>Տե՛ս՝ Միհրան Մինասեան, «Հայ Պարբերական Մամուլի Նորայայտ Անուններ», Հաջկազեան Հայագիտական Հանդէս, Թ. հատոր, 1981, էջ 295-304:

<sup>2</sup>Ամալիա Կիրակոսեան, Հայ Պարբերական Մամուլի Մասնագիտութիւն (1794-1967), Երեւան, 1970:

<sup>3</sup>Յօդուածին մէջ տրուած են ծանօթութիւններ 35 թերթերու մասին, բայց անոնցմէ մէկը՝ Արմաշի Մասիքը թիւրիմացութեամբ տեղ գտած էր հոն: Մանօթ է որ այդ թերթը կը խմբագրուէր Արմաշ ու կը տպուէր Պոլիս, եւ մենք թիւրիմացաբար զայն համարած էինք նորայայտ թերթ՝ զայն Արմաշ տպուած թերթերու ցուցակին մէջ չգտնելու պատճառով: Այս առիթով կը սրբագրենք մեր սխալը:

<sup>4</sup>Մ. Ա. Բարդոյեան, Հայ Պարբերական Մամուլը. Մասնագիտական Համահաւաք Ցուցակ (1794-1980), Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1986:

- <sup>5</sup> Յամսիկ Ա. Ստեփանեան, *Հայաստան Թուրքերէն Գրքերի Մատենագիտութիւն 1727-1968*, Երեւան, 1985:
- <sup>6</sup> Յամսիկ Ա. Ստեփանեան, *Հայաստան Թուրքերէն Պարբերական Մամուլ (Մատենագիտութիւն)*, Երեւան, 1987:
- <sup>7</sup> Կազմուած է պարսկերէն «սալ»-տարի եւ «նամէ»-գիրք, թուղթ բառերէն, այսինքն՝ բառացիօրէն կը նշանակէ «տարեգիրք»:
- <sup>8</sup> Կազմուած է պարսկերէն «նէվ»-նոր եւ «սալ»-տարի բառերէն, այսինքն՝ բառացիօրէն կը նշանակէ «նոր տարի» եւ դորձածուած է «տարեգիրք» իմաստով:
- <sup>9</sup> Կազմուած է պարսկերէն «նուղ»-օր եւ «նամէ»-գիրք, թուղթ բառերէն, այսինքն՝ բառացիօրէն կը նշանակէ «օրագիրք»:
- <sup>10</sup> Կազմուած է արաբերէն «մէվսիմ»-եղանակ, ժամանակ եւ պարսկերէն «նամէ»-գիրք, թուղթ բառերէն եւ դորձածուած «տարեցոյց» իմաստով:
- <sup>11</sup> Մայնամէներու ընդհանուր մատենագիտութիւնը տե՛ս՝ Hasan Duman (comp.), *Osmanlı Yıllıkları (Salnameler ve Nevşaller)* [Օսմանեան Տարեգիրքեր (Մայնամէներ Եւ Նէվսալներ)], Istanbul, 1982, ուր յիշուած է նաեւ թէ անոնցմէ խրաքանչիւր հատորը Պոլսոյ ո՛ր հանրային գրադարանին մէջ կարելի է գտնել:
- <sup>12</sup> Բացառութիւն կը կազմէ միայն *Նոր Ռե Ներկը*, որ անունով միայն ծանօթ է Հայ մամուլի մատենագիտութեան. տե՛ս՝ Ժիրայր Դանիէլեան, «Հայ Պարբերական Մամուլի Հարցեր», Հայկազեան Հայագիտական Հանդէս, հ. 2., 1977-78, էջ 319:
- <sup>13</sup> Բարբոյեան, էջ 18:
- <sup>14</sup> Բարբոյեանի օգտագործած աղբիւրներու ցուցակին մէջ յիշատակուած է հանդէսի նոյն՝ Թ. Հատորին մէջ լոյս տեսած Ժիրայր Դանիէլեանի «Սփիւռքահայ Նոր Պարբերական Մամուլը 1967-1980 թթ.ուն (Մատենագիտական Փորձ)» ուսումնասիրութիւնը, բայց չէ յիշուած մեր յօդուածը: Բարբոյեան հաւանաբար ձեռքի տակ ունեցած է Դանիէլեանի յօդուածին առանձնատիպը միայն:
- <sup>15</sup> Հ. Օգոստինոս Վ. Սեբուլեան, *Հանդէս Ամսօրեայի Թղթուածներու 100 Տարուան Մատենագիտական Ծուցակ 1887-1986*, Վիեննա, 1991, էջ 136:
- <sup>16</sup> Ալլեւալը - Մաղկէփունջ - 1906ին Լոյս Տեսած Հայ Թերթերը», *Հանդէս Ամսօրեայ*, ԻԱ. տարի, թիւ 4, Ապրիլ 1907, էջ 128:
- <sup>17</sup> Ալլեւալը - Մաղկէփունջ - Քանի Մը Գլխելիք Եւս 1906ին Լոյս Տեսած Հայ Թերթերուն Վրայ», *Հանդէս Ամսօրեայ*, ԻԱ. տարի, թիւ 5-6, Մայիս-Յունիս 1907, էջ 191-192: Ըստ Սեբուլեանի, յօդուածագիրը կրկին Համբարեանն է. տե՛ս՝ Սեբուլեան, էջ 136:
- <sup>18</sup> Բարբոյեան, էջ 62, 65:
- <sup>19</sup> Մասիս, թիւ 7, 1852, մէջբերուած՝ Վ. Գ. Ղուկասեան, *Պոլսահայ Մամուլի Եւ Հրատարակատեան Սկզբնաւորումը*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1975, էջ 290:
- <sup>20</sup> Ներսէս Գասապեան, «Գրախօսութիւն. Հայ Պարբերական Մամուլի Բիրլիտգրաֆիս», 3 Հատորով, կազմեց Յովհաննէս Պետրոսեան, Հայկական ՍՍՌ Պետգրապալատ, Երեւան, հատ. I, 1954, հատ. II, 1956, հատ. III, 1957», *Պատմա-Բանասիրական Հանդէս*, թիւ 3-4 (14-15), 1961, էջ 328:
- <sup>21</sup> Հ. Մկրտիչ Վրդ. Պոստըրեան, *Հայ Հանրագիտակ*, գիրք Ա., թիւ 1, Պուքրէշ, 1938, էջ 90:
- <sup>22</sup> Հրաչեայ Աճառեան, *Կեանքիս Ծուշերից*, Երեւան, «Միտք», 1967, էջ 137:
- <sup>23</sup> Նոյն, էջ 108:
- <sup>24</sup> Վ. Ամ Սամուէլեան, «Որբաշխարհ», տե՛ս՝ *Ազգակ 25 ամեակ (1927-1952)*, բացառիկ թիւ, էջ 91:

- <sup>25</sup> Հ. Եփրեմ Վ. Պողոսեան, Պատմութիւն Հայ Մշակութային Ընկերութիւններու, Հատոր Գ., Ազգային Մատենադարան ՄԹ, Վիեննա, Մխիթարեան Տպարան, 1969, էջ 65.
- <sup>26</sup> Պողոսեան մերթ կու տայ 1873 եւ մերթ՝ 1874 թուականները իրրեւ հրատարակութեան տարի տե՛ս՝ նոյն, էջ 65-66.
- <sup>27</sup> Նոյն, էջ 111.
- <sup>28</sup> Նոր Այգ (Մարզուան), թիւ 10, 1910, էջ 254, մէջբերուած՝ Պողոսեան, Հ. Գ., էջ 112.
- <sup>29</sup> Տե՛ս նաեւ՝ էյի Նազարեան, Պատմագիրք Նազարեան Գերդաստանի (1475-1988), Պէյրութ, 1988, էջ 220.
- <sup>30</sup> Մանուկ Գ. Ժիզմէճեան, Ռարբերդ Եւ Իր Զուակաները, Ֆրէզնոյ, 1955, էջ 593.
- <sup>31</sup> Արտաշէս Վրոյր, Անթուս, Երեւան, Հայպետհրատ, 1964, էջ 55-56.
- <sup>32</sup> Նոյն, էջ 80-81.
- <sup>33</sup> Նոյն, էջ 57, 80.
- <sup>34</sup> Ասատուր Յ. Մակարեան, «Ամփոփ Համայնագատկեր Բիթանիոյ Հայութեան Մեծ Ողբերգութեան», տե՛ս՝ Ծուշամատեան Մեծ Եղեռնի 1915-1965, Պէյրութ, Հրատարակութիւն «Զարթօնք» օրաթերթի, 1965, էջ 303.
- <sup>35</sup> Դէպի Երկիր (Հալէպ), պրակ Դ-Ե., 1946, էջ 200-202.
- <sup>36</sup> Նոյն, էջ 205.
- <sup>37</sup> Արեւելք, թիւ 7057, 1909, մէջբերուած՝ Հ. Եփրեմ Վ. Պողոսեան, «Մշակութային կեանքը կարծոյ Մէջ», տե՛ս՝ Ղազար Զարդ, Ծուշամատեան Բարձր Հայրի-Կարի նապատուս, Պէյրութ, 1957, էջ 314.
- <sup>38</sup> Գարեգին Լեւոնեան, Հայոց Պարբերական Մամուլը. Լիակատար Ծուցակ Հայ Լրագրութեան Սկզբից Մինչեւ Մեր Օրերը (1794-1934), Երեւան, 1934, էջ 214.
- <sup>39</sup> Նոյն, էջ 151, թիւ 1397.
- <sup>40</sup> Կիրակոսեան, էջ 298, թիւ 1968.
- <sup>41</sup> Թէոդիկ, Ամէնուն Տարեցոյցը, 20րդ տարի, Վենետիկ, 1926, էջ 655.
- <sup>42</sup> Ռոպերտ Ժեպեճեան, Ինքնակենսագրութիւն, Երեւան Եւ Գործունէութիւն, Հալէպ, 1999, էջ 110.
- <sup>43</sup> Տե՛ս նաեւ՝ Նազարեան, էջ 220, ուր հրատարակութեան թուական կը յիշուի 1933ը.
- <sup>44</sup> Սուրբական Մամուլ, Բ. տարի, թիւ 200, 10 Յունուար 1924, էջ 3.
- <sup>45</sup> Հ. Եփրեմ Վրոյր. Պողոսեան, «Պարտիզակի Ընկերութիւնները», տե՛ս՝ Կարօ Գէորգեան, Ամէնուն Տարեգիրքը, Դ. տարի, Պէյրութ, 1957, էջ 214.
- <sup>46</sup> Ալլիւալթ - Մաղկէփունջ - Քանի Մը Գիտելիք Եւս 1906ին Լոյս Տեսած Հայ Թերթերուն Վրայ», էջ 192.
- <sup>47</sup> Արսէն Միքայէլեան, «Ղարաբաղի Վերջին Դէպքերը», Հայրենիք, Ա. տարի, թիւ 11, Սեպտեմբեր 1923, էջ 117-118. նոյն, թիւ 12, Հոկտեմբեր 1923, էջ 120.
- <sup>48</sup> Արտաշէս Հ. Գարտաշեան, Նիթեր Եզրագոտի Հայոց Պատմութեան Համար, Բ. Հատոր, Վենետիկ, 1986, էջ 167.
- <sup>49</sup> Ժողովուրդի Զայնը (Պոլիս), թիւ 1174, 1922, մէջբերուած՝ Պողոսեան, Պատմութիւն Հայ Մշակութային Ընկերութիւններու, Հատոր Ա., Ազգային Մատենադարան ԾԶԵ, Վիեննա, Մխիթարեան Տպարան, 1957, էջ 296.
- <sup>50</sup> Բազմապէս, ՀԹ. Հատոր, թիւ 3, Մարտ 1921, առաջին շաբաթիկին ներսի կողմը, «Շնորհակալութեամբ Ստացած Ենք» բաժին.
- <sup>51</sup> Լեւոնեան, էջ 20, թիւ 130.
- <sup>52</sup> Կիրակոսեան, էջ 394, թիւ 2638.
- <sup>53</sup> Բարլոյեան, էջ 38, թիւ 134.
- <sup>54</sup> «Կարապետ Փանոսեան», տե՛ս՝ Թէոդիկ, Ամէնուն Տարեցոյցը, ԺԼ. տարի, Փարիզ, 1924, էջ 206.

- <sup>55</sup>Գառնիկ Ստեփաննան, *Կենսագրական Բառարան*, հատոր Ա., Երևան, «Հայաստան», 1973, էջ 103:
- <sup>56</sup>Հալիպի Ազգային Առաջնորդարանի դիւանատան նիւթերը ցոյց կու տան որ Տէր Մարգարեան եղած է Հալիպ քաղաքի ծանօթ դէմքերէն եւ վարած է ազգային բազմաթիւ պաշտօններ: Աւելի ետք, ան եղած է Հալիպի անգլիական հիւպատոսարանի թարգման: Կազմած է հայերէն ձեռագիր ու տպագիր գիրքերով հարուստ, ճոխ դրաղարան մը, որմէ յաճախ օգտուած եւ իրենց գործերուն մէջ վկայակոչած են Բարդէն Ա. Աթոռակից Կաթողիկոս Կիւլէսէրեան եւ Արտաւազդ Արք. Սիւրմէեան: Մահացած է Հալիպ, 2 Յունիս 1908ին:
- <sup>57</sup>Յ. Ճ. Սիրունի, «Ազատամարտ»ի Սերունդը», *Հայրենիք*, Բ. տարի, թիւ 7, Մայիս 1924, էջ 82:
- <sup>58</sup>Բարլոյեան, էջ 78, թիւ 551:
- <sup>59</sup>Գրիգոր Պողարեան, *Այնթապահանք*, հատոր Ա., Պէյրուս, Տպարան Ատլաս, 1974, էջ 51:
- <sup>60</sup>Գարտաշեան, էջ 167:
- <sup>61</sup>Տե՛ս նաեւ՝ Նազարեան, էջ 220:
- <sup>62</sup>Բազմալէպ, ՀԹ. հատոր, թիւ 2, Փետրուար 1921, երկրորդ շապիկին դուրսի կողմը, «Բազմալէպի Հետ Փոխանակուող Օտարալեզու Թերթեր» բաժին:
- <sup>63</sup>Կարճ (Սան-Բաուլօ), Գ. տարի, թիւ 4, Ապրիլ 1935, էջ 9:
- <sup>64</sup>Աշոտ Քհնյ. Տէր Եարութիւնեան, «Մանչեսթրի Հայ Գաղութը», «Զարթօնք» Բացառիկ Նուիրուած Ռամկազար Ազատական Կուսակցութեան Գառառնամեակին Եւ «Զարթօնք» Օրաթերթի Քսանհինգամեակին, Պէյրուս, Տպարան Ատլաս, 1982 Սեպտեմբեր, էջ 244:
- <sup>65</sup>Բազմալէպ, ՀԸ. հատոր, թիւ 7, Յունիս 1920, վերջին շապիկին վրայ, «Շնորհակալութեամբ Ստացած Ենք- Ազգային Օտարալեզու Հանդէսներ» բաժին:

### 33 NEWLY DISCOVERED TITLES OF THE ARMENIAN PERIODICAL PRESS (Summary)

MIHRAN MINASIAN

In the first part of the article, the author discusses certain issues related to compiling a full bibliography of the Armenian periodical press. He suggests including certain Turkish language yearbooks printed in Armenian script in future lists of the Armenian periodical press because these publications are closer by their nature to periodicals than to books. He also makes some comments on the most recent bibliography of the Armenian periodical press, compiled by Manuel Babloyan and published in 1986. In the second part of the article, the author presents 28 Armenian language periodicals, as well as five other foreign language periodicals, published by Armenians, that were not included in Babloyan's bibliography. These periodicals were published from the 1840s until 1964 and in various locations like Constantinople, Aleppo, Tiflis, Baku, Shushi, Western Armenia, Cilicia and the Americas.